ИНГО АРМЕНИЯ
IngoArmenia

# ՎԹԱՐԻ՞ ԵՔ ԵՆԹԱՐԿՎԵԼ



**ՑԱՎՈՒՄ ԵՆՔ :(**
Ձեր և մյուս կողմի հաջորդող քայլերի հնարավոր տարբերակներն են.

## ԿԱ ՄԵՂԱՎՈՐ ԿՈՂՄ

### ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ, ԵԹԵ

**ASWA** հավելվածով կամ **Համաձայնեցված** հայտարարագրով

1) Տեղի ունեցած պատահարում ներգրավված է **միայն երկու ավտոտմեքենա**,
2) Առնվազն մեկը պատահարի պահի դրությամբ **ունի գործող ԱՊՊԱ** պայմանագիր,
3) **Գույքային վնաս** է պատճառվել **միայն մասնակից ավտոմեքենաներին**,
4) Մասնակից վարորդներից մեկը **ընդունում է իր մեղավորությունը**,
5) Տուժողի կողմից ակնկալվող հատուցման չափը չի գերազանցում **100,000 ՀՀ դրամը** մարզերում, իսկ Երևանում՝ **200,000 ՀՀ դրամը՝ ASWA հավելվածով լրացնելու դեպքում:**

## **ASWA** հավելվածով

**Քայլ 1**
Բացե՛ք կամ ներբեռնեք **ASWA** հավելվածը (iOS, Android)

**Քայլ 2**
Սեղմե՛ք **Գրանցել պատահարը**

**Քայլ 3**
Հետևե՛ք նշված քայլերին և **կցե՛ք** պահանջվող լուսանկարները

**Քայլ 4**
Կարո՛ղ եք **լքել վթարի վայրը**

**ԱՅՍ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՎԵԼՅԱԼ ԴԻՄՈՒՄ ԳՐԵԼՈՒ ԿԱՐԻՔ ԱՅԼԵՎՍ ՉԿԱ:**

## **Համաձայնեցված** հայտարարագրով

**Քայլ 1**
**Առնվազն 3 անգամ լուսանկարե՛ք** բոլոր ՏՄ-ների վնասվածքները

**Քայլ 2**
**Լրացրե՛ք և ստորագրե՛ք** համաձայնեցված հայտարարագիրը

**Քայլ 3**
Մեղավոր վարորդը 40 րոպեների ընթացքում **զանգահարում է ապահովագրողին**

**Քայլ 4**
Կարո՛ղ եք **լքել վթարի վայրը**

ИНГО АРМЕНИЯ IngoArmenia

# ՄԵՂԱՎՈՐԸ ՊԱՐԶ ՉԷ

## ԿԱՄ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ, ԱՊԱ.

**Ճանապարհային** ոստիկանություն կամ **Պարեկային** ծառայություն

### Քայլ 1

**Վթարի վայր հրավիրեք** ՃՈ-ին, իսկ Երևանում՝ պարեկային ծառայությանը

### Քայլ 2

**Ձեռնարկե՛ք միջոցներ** վթարի հետքերը պահպանելու համար

### Քայլ 3

**40** րոպեների ընթացքում տեղեկացրեք **բոլոր ապահովագրողներին**

- **3** օր — եթե 3 ժամվա ընթացքում տուժողը վնասվածքների հետ կապված դիմել է բուժհաստատություն
- **30** օր — պատահարի հետևանքով որևէ անձի մահվան դեպքում

### Քայլ 4

**Հետևե՛ք ցուցումներին** և մասնակցեք փաստաթղթերի կազմմանը

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Պատահարից հետո վնաս կրած ՏՄ սեփականատերերը պարտավոր են մինչև ապահովագրական ընկերության հատուցման վերաբերյալ որոշումը **չիրականացնել մեքենայի վերանորոգման աշխատանքներ**, կամ վերանորոգման աշխատանքներից առաջ տեղեկացնել ապահովագրողին, եթե աշխատանքների արդյունքում պատճառված **վնասները ամբողջությամբ կպահպանվեն**:

Քանի որ ապահովագրական հատուցման վերաբերյալ ամբողջ նամակագրությունը և ծանուցումները իրականացվում են էլեկտրոնային եղանակով, շատ կարևոր է ԱՊՊԱ պայմանագրերի մեջ նշել **ճիշտ էլեկտրոնային հասցեներ**: Եվ առհասարակ՝ խնդրում ենք ուշադրություն դարձնել **լրացվող տեղեկատվության ճշգրտությանը**՝ հետագա ժամկետների շեղումներից խուսափելու համար:

## ՀԱՏՈՒՑՄԱՆ 2 **ԳՈՐԾԸՆԹԱՑ**

### Ստանդարտ 1

**երբ պարզեցված ընթացակարգն անհնար է**

- Դիմումը կազմվում է ՃՈ կամ Պարեկային ծառայության կողմից՝ պատահարից հետո **(միջինում 5 օրվա ընթացքում)**
- Դիմումի գործընթացը սկսելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետք է կազմվեն **3 ամսվա ընթացքում**

### Ստանդարտ 2

**առկա է վարույթ կամ քրեական գործ**

- Դիմումը կազմվում է ՃՈ կամ Պարեկային ծառայության կողմից՝ պատահարից հետո **(միջինում 5 օրվա ընթացքում)**
- Դիմումի գործընթացը սկսելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետք է կազմվեն **1 տարվա ընթացքում**

## ԳՈՐԾԸՆԹԱՑԻ **ՄԵԿՆԱՐԿ**